դոր փոքր ի չատէ ասացիլ լսողաց։ Նախ զի
քահանայիլ վախրՓ տներ տան կենալ եւ օլ-
ֆայ։ Երկրորդ՝ դպրապետ պահեն միչտ վասն
քարոզի. եւ նա ունի կէլիր։ Երրորդ՝ դպրա-
պետք պահեն եւ ամէն ամի վճարք առնեն· 10
նոյնպէս թային կայ չրիթալնուն եւ վանո-
րէլիցն։ Չորրորդ՝ զի թէ ոք մեռանի եւ նախ
ամէն ժամի, ապա վանօրէլից, ապա չրիթալ-
նուն, ապա դպրատան, ապա քահանայիլ մասն
եւ բաժին հանէ ըստ կարեաց. որն տասնական 15
զուռուչ, որն քսանական, որն երեսնական եւ
այլն։ Հինգ՝ սահմանք է զի որչափ որբ տղայ
կամ աղջիկ լինի, տարին երկու կամ իրեք
պիտի կարդեն. եւ մայեա ճիհէզ աղանին տան
յիսուն զուռուչ՝ աւելի կամ պակաս։ Վեցե- 20
որդ՝ որբ տղաք դրսէն կամ այլ քաղաքաց
կամ այլ գաւառաց՝ Պուլտանու, Հայաստա-
նու առնուն կարդացնեն լաւ, սարկաւագ օր-
հնել տան. ապա քահանայ եւ հարսնիքն օր-
հնելու խարճն մէկ մարդ պիտի առնէ որդաց 25
որդի. եւ թէ մեռանին նոքա՝ պիտի թաղել
տան եւ գհոգայ հացն։ Եւթներորդ՝ որչափ
ազքատք մեռանին ի դուրս կամ օտարական,
ոմն վասն հոգոյն պատանք, թէ թապութ եւ
թէ ամէն խարճն եւ թաղում առնել տայ։ 30
Ութերորդ՝ որչափ այլ քաղաքս վախիր քահա-
նայ լինի կամ աղքատ եկեղեցի, Լովայ ղրկեն
զգեստ, թէ գիրք եւ թէ այլ բան· նաեւ քա-
հանային տամ յամէ հախ տան, որ անխափան

11 կա։ — 30 տա։ — 32 լովա։